

**ՍՈԹՔԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ  
ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՀԱՅՈՑ  
ԳՈՐԳԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

**ՊՈՂՈՍՅԱՆ ԱՇԽՈՒՆՉ**

Պատմական գիրությունների թեկնածու, դոցենտ,

ԳՊՀ դասախոս

Էլեկտրոնային՝ ashkhnunjpoghosyan@gmail.com

*Հայոց գորգագործական մշակույթի ու պատմության և հարկապես այս կամ այն մշակութային տարրի էթնիկական պարկանելիության մասին ամբողջական պարկերացում կազմելու համար մենք կարևորում ենք ժողովրդագրական գործընթացների նկարագիրը ինչպես ողջ հայոց մշակութային տարածքում, այնպես էլ առանձին տարածաշրջաններում՝ այս դեպքում պարմական Հայաստանի Սյունիք նահանգի Սոթք գավառում։ Անշուշտ, անհրաժեշտ է նաև ունենալ հիմնավոր պարկերացում դրվագած տարածաշրջանում հաստատված էթնիկական հանրույթների գոնդեսական ու մշակութային ավանդույթների, մասնավորապես կարափափախների, թարաքյամաների, քրդական ծագումով քոլանիների և այլոց մասին, որոնք վարում էին քոչվորական ու կիսաքոչվորական կենսաձև։ Նման հետազոտությունների արդյունքում ի հայր են գալիս այս կամ այն տարածաշրջանի պարմամշակութային համեմատաբար ընդհանրացված նկարագիրը ներկայացնելու հնարավորություններ։ Հենց նման մեթոդի շնորհիվ էլ մենք հնարավորություն ենք ունեցել ներկայացնել Սոթքի հայոց գոնդեսամշակութային գործունեության նկարագիրն ու նաև առանձնացնել այդպես ու հարակից գորգագործական կենսդրուներում ստեղծված գորգերի որոշ գործեր («Խնճորեսկ», «Սոթք», «Զրաբերդ – Վիշապագորգ» և այլն)։*

*Բանալի բառեր՝ Սոթք, ժողովրդագրություն, գորգագործություն, գորգ, Մազրա, քոչվոր, Փառիսոս, քոլանի։*

Սոթքում կամ ընդհանրապես որևէ այլ տարածաշրջանում մշակութային այս կամ այն տարրի ծագումնաբանության և մասնավորապես դրանց էթնիկական պատկանելիության խնդիրների պարզաբանման գործում առաջնային նշանակություն ունի տվյալ տարածաշրջանի ժողովրդագրա-

կան նկարագրի ուսումնասիրությունը: Չափազանց կարևոր է նաև այդտեղ բնակված ցեղերի կենցաղավարման, տնտեսական ու հոգևոր մշակույթի զարգացման մակարդակը:

Նշված տարածաշրջանը և ընդհանրապես Հայոց Արևելից կողմը մինչ XVIII դարի սկզբները դեռևս գերազանցապես բնակեցված էր հայերով: Դրա ակնհայտ վկայությունը տարածաշրջանի գյուղերի հայեցի անվանումներին վերաբերող տեղեկություններն են: Այս հարցում առաջին համապարփակ ցանկը Ստեփանոս Օրբելյանի ներկայացրածն է: Պատմիչը թվարկել է XIII - XIV դդ. Տաթևի վանքին հարկատու Սոթքի ներքոհիշյալ բնակավայրերը՝ Ծափաթաղը, Ունչի ծոր (Ունչիծոր), Հովուաթափը (Հավսաթաղը), Ավազան, Համամաբակը, Արավիսաբակը (Արևիսաբակ), Գովկարինճ, Տրետութ, Սափչի անապատ (Սափչանապատ), Խորթագետ, Վարդանաբակը, Նորաբակը, Վասակաշեն, Կութք, Անապատ, Արփունչն, Շատարեք, Կուչկոնիք (Կուչկոնիք), Բարկոյք (Պարկիս), Վաղավեր, Ուռակարբ, Ամեռնափոր, Շատվան, Շինիք, Աստվածձին, Երեզ, Բակափոր, Մաքնոց, Ետեցիք, Զերիշատ, Ասխոզ (Ազխոզ), Աղբերաձոր, Արմնա (Արմնայ), Շապուհաթաղ, Կոտակը (Կատակ), Վաշեիրակ, Զաղացաձոր, Զաջուրաբակ, Բաշուք (Պաշուք), Տեռնատյան, Բերդաձոր, Դրունք (Տրունք), Որթնիք (Որդնիք), Դարանք (Տարոնք), Դարանակ (Տարանակ), Ախոռատուն (Ախոռանտուն), Ոգմոնք, Պաշո, Չահո, Խարասանիբակ, Որոկիք (Որոգիք), Ականք (Ակոնք), Գողոց Ագարակ, Այք, Գեղամաբակ, Կախանաղբյուր, Սահակաբակը, Խոնթաբակ, Զաղացաձոր, Որուց, Դարաբակ, Տկոլաբակ, Ատրմենաբակ, Խորժա, Սնաձոր, Շար, Գետաբակ, Երերի, Վարժանկա առբյուր, Տոնշենք, Եղջերուենիկ, Անապատ, Աղձի գետ (Օձիգետ), Քթաշեն, Գավառնի, Կնձոտ, Դարանակ, Կաթոնիք<sup>1</sup>: Դրանք բոլորն ել հայեցի անվանումներ են:

Լավ կամ վատ այդ իրավիճակը շարունակվեց մինչ XV-XVII դարի առաջին կեսը, երբ Սոթքում և Ծարում հաստատված Զաքարյան իշխանական տան ճյուղավորումներից մեկին՝ Դոփյաններին փոխարինում են դրանցից սերված երկու նոր իշխանական տներ՝ հանձինս Սոթքի տիրակալ Մելիք Շահնազարյանների և Ծարում իշխող Զհանշահենքի<sup>2</sup>: Առավել ազդեցիկ էր Մելիք Շահնազարյաններ իշխանական տունը, որն էլ Շահ Աբաս Մեծի կողմից 1606թ. ստանում է մելիքական տիտղոս ու գերիշխող դիրք ամբողջ Գե-

<sup>1</sup> Ստեփանոս Օրբելյան, Լ. 374:

<sup>2</sup> Բ. Ոլուրարյան, Նշվ. աշխ., Լ. 334-337:

ղարքոնիքում<sup>3</sup>: Առաքել Դավիթեցու պատմելով՝ «Մելիք Շահնազարի տունը Մազրա գյուղում էր, ինքն էլ բնիկ այդ գյուղից էր, հայ էր, հավատով քրիստոնյա, իշխան էր հզոր ու փառավոր և շահին այնպես հյուրընկալեց, ինչպես վայել էր թագավորին: Ինքը բարեկամ ու մտերիմ էր թագավորին և հարգված թագավորի կողմից: Այդ պատճառով էլ թագավորը թանկագին ու ազնիվ զգեստներ նվիրելով շքեղացրեց: Նրան գավառի մելիքության իշխանությունը պարզեց, գյուղեր տվեց նրան ու Եղբայրներին: Հաստատուն իրովարտակ գրեց ու տվեց նրանց որպեսզի հաստատուն լինի այդ ժառանգությունը»<sup>4</sup>: Պարզ է, որ մելիքության կազմում եղած բնակավայրերն էլ պետք է եղած լինեն հայաբնակ: Ու դա էլ պատճառ էր, որ XVII դարի սկզբներին պատմական Հայաստանի Այրարատ նահանգի գավառների հայ բնակչության մի մասը, ապաստան փնտրելով ջալալիների ասպատակություններից, հաստատվում է Գեղարքոննիքում ու մերձակայքում՝ այդ թվում նաև Սոյքում: Նմանօրինակ Ներեքնիկ տեղաշարժերն ունեցել են շարունակական ընթացք: Սակայն դրան գուգահեռ էլ շարունակական էին նաև օտարածին եթնիկական հանրույթների թափանցումները: Այդուհանդերձ, այստեղ ու նաև Արցախում և Սյոննիքում իշխող մելիքական տներին դեռևս հաջողվում էր դիմակայել հորդացող տարացեղ մահմեդական քոչվոր ցեղերին: Թերևս դրա մասին վկայում են Սիմեոն Երևանցի կաթողիկոսի «Զամբողում» տեղ գտած տեղեկությունները Սոյքի, Քարվաճառի ու մերձակա մի շարք տարածաշրջանների խոշոր վանքերին հարկատու եղած բնակավայրերին, որոնց մեծագույն մասի անվանումները դեռևս հայեցի էին: Այսպես, Մաքենյաց վանքին հարկատու էին Արեգունու գավառում՝ Կոյշ, Հոտած աղբյուր, Տրտագետ, Սալամալիք, Նշխարք, Կզնուտ, Կածիս, Բար, Վարդենիս, Քավթառանց, Սակուտ, Փառակոնիս, Քոյլատակ, Կետանց, Վանեվան, Ախենիս, Կաթիկ, Կաթածն, Աղջաքիլիթ, Կարմիրշեն, Վելի շեն, Քաստամ, Ծուկրուկ, Խոսքաշեն, Ակոնք, Պարկիս, Ուկեշեն, Անմեռ, Խսիխնակ, Մազրա, Էդիլ, Դավալանց, Սոր, Կալեր, Արքանուեր, Երիցաշեն, Զաղացաձոր, Համաթիար, Դարանակս, Աղջաղալա, Երիշատ, Ոկոնիս, Զիլ, Արտավուճ, Գետիկ, կարմունց և Դարաքյահանակ գյուղերը: Խութավանքին հարկատու էր «Քյոլանի ողջ երկիրը, որի հայերեն անունն է Ծարի երկիր, և որը սահմա-

<sup>3</sup> Առաքել Դավիթեցի, Պատմություն, բնագրի հետ համատես և խմբ. Վ. Գ. Համբարձումյան, Եր., «Սովետ. գրող», 1988, լ. 85, տես՝ նաև՝ Ա. Մաղայան, Արցախի մելիքությունները և մելիքական տները XVII- XIX դդ., լ. 158:

<sup>4</sup> Առաքել Դավիթեցի, լ. 85:

նակից է Խամսային, սակայն Եջմիածնի վիճակ է և այժմ Երևանի իշխողի ձեռքի տակ է: Մրա գյուղերն են՝ Էրք, Շնիլանց, Կարմիրշեն, Սալամալիք, Քավթառանց, Ոտուցիոր, Ալարենիս, Շուղրուղաշեն, Հոսարակ, Կյավալու<sup>5</sup>: Թվարկվածները բոլորն ել գտնվում են Սևանի հարավ-արևելյան մասում, իսկ ևս քսան գյուղ՝ Մեծ Շարը, Կաժը Անոլիսսը, Խոլոզացը, Դաշտակը, Հաճարը, Ապահենը, Ճոմեն, Քարատակը, Զվարը, Մոսը, Սևաջուրը, Շովատեղը, Խրանցը, Հալունը, Մոթանցը, Մեծ և Փոքր Դավաչյուրները, Լսը, Յանշաղը, Բարսեղիշենը, Մեյդանը, Երիցիշենը, Խոլթավանքը, Չափարը, Կյարաքը, Նորշենը, Խնդրավանքն էլ տեղաբախշված էին ավելի հարավ ու բարձրադիր տարածքներում<sup>6</sup>:

Ինչպես տեսնում ենք, կաթողիկոս Սիմեոն Երևանցու հիշատակած և XVIII դարի վերջին քառորդին վերաբերող Սութքի գավառում և դրա մերձակայքներում հիշատակված գյուղերի մեծագույն մասը դեռևս հայաբնակ և հայանուն էին: Սակայն հանուն արդարության պետք է շեշտել, որ հայաբնակ գյուղերի քանակությունը այս ցուցակում նախորդ ցուցակների համեմատ նկատելիորեն պակաս է, և ըստ Երևույթին Ստ. Օրբելյանի ցանկում եղաների մի մասը դարձել էր արդեն անբնակ և կամ բնակեցված էին եկվոր մահմեդական ցեղերով:

Իսկ ընդամենը շուրջ մեկ դար անց տարածաշրջանում հիմնականում բացակայում էին հայեցի անվանումներով բնակավայրերը: Դրանք ներկայացնում էին հետևյալ պատկերը՝ Թալթուփի ղլաղ, Զոդ, Զարզիքի, Դաշելքի, Ազյողուշ, Ազիզլու, Բասարգեչար, Զաղալու, Դաշենդ, Վերին Շորժա, Ներքին Շորժա, Զիլ, Քյասաման, Զախրլու, Շիշկայա, Յարփուզլու, Փոքր Մարա, Ղարահման, Ղանլի, Մեծ Մազրա, Ղըրիսբուզադ, Ղոշաբուլադ<sup>7</sup>: Մրանք բոլորը բնակեցված էին մահմեդական-ներով և միայն Զարզիքի գյուղում էին բնակվում ինը հայ<sup>8</sup>: Այս ամենն առաջին հերթին արդյունք էր XVII- XVIII դդ. տեղի ունեցած աշխարհաքաղաքական այնպիսի իրադարձությունների, ինչպիսիք էին Շահ Աբասի կազմակերպած բռնա-

<sup>5</sup> Սիմեոն կաթողիկոս Երևանցի, «Զամրո»: Հիշատակարան Եջմիածնի Սուրբ Աթոռի և նրա հարակից վանքերի: Թարգմանությունը, առաջարանը և ծանոթագրությունները՝ Վ. Համբարձումյանի, պատմաաշխարհագրական բնույթի ծանոթագրությունները և քարտեզները՝ Գ. Բաղայյանի, Եր., 2003, լ. 396:

<sup>6</sup> Միմևս կաթողիկոս Երևանցի, լ. 395-396:

<sup>7</sup> Զավմն Կորկուտյան, Խորհրդային Հայաստանի բնակչությունը վերջին հարյուրամյակում (1831-1931), Եր., 1932:

<sup>8</sup> Հ. Մ. Հարությունյան, Նոր Բայազետի գավառը 1828-1913 թթ., Եր., 2008, լ. 34:

գաղթը, լեզգիների ու քրդական ցեղերի կողմից պարբերաբար կատարվող ավերիչ ասպատակությունները, նաև 1607-10 թվականներին տեղի ունեցած ջալայիների ասպատակություններն ու դրանց հաջորդած տևական սովոր ու երաշտը<sup>9</sup>: Համկանալի է, որ յուրաքանչյուր նման ներթափանցումներին նախորդել ու հաջորդել էին հայաթափման նորանոր հոսանքներ: Բացի դրանից էլ անընդմեջ էին նաև ներէթնիկական հոսքերը, որոնք իհմնականում սկսվում էին հարթավայրային գոտիներից և ավարտվում պատմական Հայաստանի լեռնային, համեմատաբար ապահով վայրերում: Այդպիսին էին համարվել նաև Սևանի ավազանն ու մասնավորապես Սորքը: Դա հնարավորություն էր տալիս հայաբնակ բնակավայրերին շատ թե քիչ պահպանել իր հայեցի գոյությունը:

Ի դեպ, այս առումով հայտնի է, որ Շահ Աբասը, անցնելով թուրքերի դեմ հակահարձակման, հարմար էր գտել տեղահանվածների մի մասին վերադարձնել իրենց բնակության նախկին վայրեր: Դրա մասին է Մելիք Շահնազարի որդուն՝ Մելիք Յավորուն ուղղված մի հրամանագիր որում ասված է, որ «զգերիսն գավառին ծովակին Գեղամայ բաշխեալ եմք, ապա ուրեմն պարտ է, առ որս և գտանիցին՝ թե առ երևելի նախարարս, առ յատկացեալ արգույ պաշտօնեայս իմ կամ առանձնական ծառայս նախարարաց և կամ առհասարակ յաղթական գօրականս, չպահել առ ինքեանս զգերիսն Գեօքչայի, այլ յանձնել գնուա հատկացելոյն յագգային իրեանց Մելիք Յավորուն Գեօքչայի, զորս հասուացէ առ իրաքանչիր տեառն, զիրամանաւ իմով չանցանել ընդդիմութեամբ և պատճառել զպատիժ»<sup>10</sup>:

Այդ նոյն հրամանով նաև Մելիք Շահնազարի որդի մելիք Յավորուն էր հնարավորություն տրվել Պարսկաստանից վերադառնալ Գեղարքունիք: Արքեպիսկոպոս Սմբատյանցի ունեցած տվյալների համաձայն Մելիք Շահնազարյաններին էր պատկանում Դրախտիկից Աղյուսաման ընկած գյուղերը<sup>11</sup>: Մելիք-Շահնազարյանների նստավայրը Մեծ Մաքրա գյուղն էր՝ որոշ ժամանակ էլ այդպիսին եղել է Զոր ավանը: Սակայն այդ գործընթացներն սկսվել

<sup>9</sup> Տես՝ Առաքել Դավիթինցի, Լք 75-76:

<sup>10</sup> Ա. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատազրական մտքի պատմության, գիրք Նրկորդ, Եր., 1959, Լք 117-118:

<sup>11</sup> Մեսրոպ Արքապիսկոպոս Սմբատյանց, նշվ. աշխ., Լք 793: Գեղամա Մելիք Շահնազարի Պարսկաստան անցնելու մասին տես նաև՝ Հովհաննիսյան Ա.՝ Դրվագներ հայ ազատազրական մտքի պատմության, գիրք Նրկորդ, Եր., 1959, Լք 72-72:

Էին դեռևս XVII դարի սկզբներից, ինչպես վերն ասվեց, աշխարհաքաղաքական անքարենպատ պայմաններից դրդված, տեղաբնիկներն աստիճանաբար սկսել էին լրել տարածաշրջանն ու հաստատվել այլ վայրերում, նաև Արցախում, Վրաստանում և այլուր: Հարկ է շեշտել, որ այդ տեղաշարժերը պայմանավորված էին մի քանի այլ հանգամանքներով ևս: Այդպիսիք էին Պարսկաստանի շահ Մահմադ խան Ղաջարի ավերիչ առշավանքները հարավյախն Կովկաս, դրան հաջորդած տևական երաշտն ու սովը: Մինչ այդ XVII դարի վերջերին ու XVIII դարի սկզբներին Գարդման ու Վարանդա էին տեղափոխվել Մելիք-Շահնազարյանները: Շահ Աբաս I-ինի ժամանակներից Մելիք-Շահնազարյանների մի ճյուղն էլ հաստատված էր Գարդմանում ու մելիքության կենտրոնատեղին էլ Ոսկանապատ գյուղն էր<sup>12</sup>: Բացի դրանից՝ այդ ճյուղին էին պատկանում նաև մերձակա Բրաջուր, Մոտուք և Միրզիկ գյուղերը<sup>13</sup>: 1603 թվականից էլ այս մելիքության մի ճյուղն էլ տեղափոխվել էր Վարանդա ու հաստատվել Ավետարանոց գյուղում<sup>14</sup>: Մելիք Շահնազարյանների մի ճյուղն էլ հետագայում հաստատվում է Գյովհստան գավառի Վերիշեն գյուղում<sup>15</sup>: Բնական է ենթադրել, որ այդ տեղաշարժերի շնորհիվ Գեղարքունյաց ու Սոռոհ մշակութային ավանդություններն այս կամ այն չափով տեղայնացվեցին նաև Մելիք-Շահնազարյանների բնակության այդ նոր վայրերում ևս: Մեր կարծիքով՝ դա հատկապես պետք է վերաբերի գորգերին, քանի որ դրանք, լինելով վերնախավային երևույթ, հիմնականում ստեղծվում էին հենց իշխանական տներում:

**Սակայն Արցախում աշխարհաքաղական ու ժողովրդագրական իրավիճակի լուրջ փոփոխություններ են տեղի ունենում Նադիր Շահի դավադիր սպանությունից հետո:** Պարսկաստանում սկիզբ առած անիշխանության պայմաններում Արցախի ցածրադիր վայրերում հիմնավորված Փանահ խանին ու նրա հաջորդներին հաջողվում է ամրապնդվել Արցախի կենտրոնում, բացի դրանից էլ նրան հաջորդած Իբրահիմ խանի հրավերով Արցախի տարբեր հատվածներում բնակության են հրավիրվում իսլամ դավանող հազարավոր վաչկատուններ: 1760-ական թվա-

<sup>12</sup> Թ. Հակոբյան, նշվ. աշխ., լ. 365:

<sup>13</sup> Տես՝ Եր. Լայայան, Գանձակ-Երևան հինգ հաստորով, հատոր 2, Եր., 1988, լ. 256:

<sup>14</sup> Բակուր, Գյովհստան Նամին, գիրք առաջին, Մեծ Կուանք /մթա 750- մթ 1828թ/, Եր., 2005, լ. 151; Մակար Եպս. Բարխուտարեանց, Աղուանից Նրկիր եւ դրացիք: Արցախ: Հատորը կազմուց՝ Պ. Զորանյան Եր., 1999, լ. 209:

<sup>15</sup> Մակար Եպս. Բարխուտարեանց, լ. 288:

կաններից մեզ հետաքրքրող տարածաշրջանում ու մերձակայքում, մասնավորապես Քարվաճառում աստիճանաբար սկսում է հիմնավորվել քրդական քոլանի ցեղը<sup>16</sup>: Իսկ ընդհանրապես Արցախի և Սյունիքի միջանկյալ տարածքի՝ քրդերով բնակեցումը առաջին հերթին պայմանավորված էր շահական Պարսկաստանի հետաքրքրություններով, որի հիմքում Արցախն ու Սյունիքը իրարից մեկուսացնելն էր: Այդօրինակ գործընթացների հետևանքով է, որ նախկին Շար գավառը 1770-ական թվականներին Սիմեոն Երևանցին արդեն տարբերակում էր «Քոլանի Երկիր» անունով<sup>17</sup>: Տարածաշրջանում հաստատված ժողովրդագրական այդպիսի իրավիճակի մասին հայտնել է նաև Մակար Եպիսկոպոս Բարխուդարյանցը՝ շեշտելով, որ «Մարաց ցեղից քուրդեր բնակում են Շար, Վակունիս, Հարճանք և Բերդանոր գավառներում», այսինքն՝ Քարվաճառ-Սողը-Քաջաթաղ տարածաշրջանում<sup>18</sup>: Հետևաբար պատահական չէ, որ 1780-ական թվականներին վերաբերող Ղուկաս Կարնեցի կաթողիկոսի դիվանում բացակայում են այդ տարածաշրջանին ու մասնավորապես Սոթքին հղված նամակները: Այդ նույն տասնամյակներում Սոթքի ու մերձական գավառների՝ նախկինում հայքնակ գյուղերում հաստատվում են նաև քոչվորական ու կիսաքոչվորական կենսաձև վարող թուրքենական տարատեսակ ցեղեր՝ այրումներ, կարափափախներ, թարաքյամաներ, բորչալուներ և այլն: Հայաբնակ բազմաթիվ բնակավայրեր եւ, լրվելով բնակիչներից ու մնալով անբնակ, աստիճանաբար ամայանում են: Սոթքն ու Շարը, Մակար Բարխուդարյանցի դիտարկումների համաձայն, հայերից վերջնականապես դատարկվել էին 1790-ական թթ., երբ հարավային Կովկասը ամայացել էր պարսից շահ Մամադ խանի արշավանքների, դրան հաջորդած և մի քանի տարի տևած երաշտի ու սովոր հետևանքով: Դրան նպաստել էր նաև Ցիցիանովի արշավանքի անհաջող ավարտը<sup>19</sup>: Ի վերջո, նախքան Ռուսաստանին միանալը, Սոթքի ու մերձական տարածքների (այսպես կոչված՝ Գյուկչայի մահա) 74 բնակավայրերից միայն 36-ն էր բնակեցված: Դրանք, բացառությամբ Զառգիբիլ ու Երանոս հայա-

<sup>16</sup> Մակար Եպս. Բարխուտարեանց, Լք 157, A. P. Խօստինոսի, Խօսիֆ Էմին, Իր., 1989, Լք 172:

<sup>17</sup> Սիմեոն կաթողիկոս Երևանցի, նշվ. աշխ., Լք 396, Սոթքի կամ Շարի ժողովրդագրական իրավիճակի մասին, տես նաև Լք 514-515:

<sup>18</sup> Մակար Եպս. Բարխուտարեանց, Լք 157:

<sup>19</sup> Այս մասին տես՝ Թ. Հակոբյան, Հայաստանի պատմական աշխարհագրություն, Եր., 1984, Լք 365:

նակ գյուղերի, հաստատվել էին քոչվոր կարափափախներն ու դրանց ցեղակից թարաքյամաները<sup>20</sup>:

Այս համառոտ ժողովրդագրական նկարագրից արդեն իսկ կարելի է պատկերացում կազմել, թե ինչ շերտավորումներից կարող է բաղկացած լինի նմանատիպ տարածաշրջանի մշակութային նկարագիրը:

Տարածաշրջանում հաստատված վաչկատունների պատմամշակութային նկարագրի մասին: Անտարակոյս ժողովրդագրական նկարագրի յուրաքանչյուր և ցանկացած չափի փոփոխություն իր հետ բերել էր մինչ այդ գոյություն ունեցած մշակութային համայիրների փոփոխություններ: Դրանք առաջին հերթին պայմանավորված են տարածաշրջանում հայտնված ցեղերի կողմից արդեն եղած մշակութային ավանդույթների յուրացմամբ ու ժամանակի ընթացքում էլ դրանցում այս կամ այն չափի լրացումների ներդրմամբ: Խնդրո հարցերի առումով Սոթքում և ընդհանրապես մերձակա գավառներում 1760-ական թվականներից հետո հաստատված ցեղերի դեպքում քննարկման ենթակա են հետևյալ հիմնական գործուները.

ա. Եկվոր վաչկատուն ցեղերի մշակութային նկարագիրն ու մասնավորապես նրանց կենցաղում գորգի օգտագործման հնարավորությունները,

բ. Ժամանակի ընթացքում եկվորների կողմից գորգագործական մշակույթի յուրացումը, տարածաշրջանում ստեղծված գորգերի գեղազարդման համակարգերում տեղի ունեցած լրացումները և գորգերի նոր տիպերի կազմավորման հնարավորությունները:

Այդքանով հանդերձ հարկ է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ մահմեղականների մոտ ընդունված է աղոթքի ժամանակ ծնրադրելուց



Նկ.1. Գորգ «Մեմլինգ»

<sup>20</sup> Այս ամենի մասին տես՝ Հ. Մ. Հարությունյան, նշվ. աշխ. I, 34-35, աղյուսակ 1:

հասուկ գործվածքներ, մասնավորապես աղոթագորգեր օգտագործելու ավանդույթը:

XIX դարի վերջերին արված դիտարկումները ցույց են տվել Սոթքին մերձակա տարածքներում տեղափորված թափառական ցեղերի ծայրահեղ ողորմելի ապրելակերպն ու նաև այն, որ նրանք շարունակում էին քոչվորական ու կիսաքոչվորական կենսաձևը<sup>21</sup>: Մասնավորապես 1881 թվականին՝ իր ճանապարհորդություններից մեկի ընթացքում, Ռաֆֆին, լինելով հյուսիսային Արցախում, թարաքյամաների մասին հիշատակում է, որ նրանք ծմեռում էին «Կուր գետի մերձակա տափառակներում, Շամքորի, Շամշադինի շրջաններում. . . այստեղ այնտեղ երևում են գետնափոր խորշեր, որտեղ կարող է բնակվել միայն թարաքյաման. . . ավազակությունը թարաքյամաների համար նույնքան սուրբ բան է, որքան իրանց կրոնի սահմանած նամազը»<sup>22</sup>: Իսկ Լեռն էլ 1888 թվականին, բավականին մանրամասնորեն նկարագրելով քոլանի ցեղին պատկանող քրդերի կենցաղը, նշել է, որ «դրանք հաստատվել էին Շարշատ (Տրտու) գետի նախալեռնային հոսանքներում (Ներկայիս Քարվաճառի շրջան), ապրում էին գետնափոր հյուղակներում և բացարձակապես ծանոթ չեն ոչ Երկրագործությանը, ոչ էլ արհեստներին»<sup>23</sup>: Դրանց գրադամունքների թվում կարևոր տեղ ուներ հատկապես ավարառությունն ու կողոպությունը: Այդ ցեղերի պատմության մանրամասներին տեղյակ հետազոտողներից մեկը՝ Վ. Ն. Լսիաթովը, համարում էր, որ «Նրանք քոչ ճանապարհին գրադպատ էին թալանով և իսկական աղետ էին նստակյաց բնակչության համար»<sup>24</sup>: Անշուշտ, այդպիսի կենսաձևի դեպքում ավելորդ է գորգերի ու գորգագործության մասին խոսելը: Խնդրո առարկայի առումով մեզ համար շատ ավելի կարևոր են Երվանդ Հալայանի քիչ ավելի ուշ՝ XIX դարի սկզբներին գրի առած տեղագրական ու ազգագրական նյութերը: Բավականին մանրամասնորեն ներկայացնելով Նոր Բայազետ գավառի բնակվայթերի պատմազգագրական նկարագիրը՝ նա առանձնակի մանրամասնություններ է հաղորդում Սոթքի գավառակի բնակավայթերի մասին:

<sup>21</sup> Տես օրինակ՝ Պերցուսկու Ի. Ա., Պուդարտեա Ազերբայջանա և ԽՎ. - Сборник статей по истории Азербайджана, вып. 1, б., 1949, № 185-205:

<sup>22</sup> Ռաֆֆի, Երկու ամիս Աղվանից և Մյունաց աշխարհներում, Երկերի ժողովածու, հ. 9, Եր., 1987, լ. 235-236:

<sup>23</sup> Լևոն, իմ հիշատակարանը, Երկերի ժողովածու, հ. 8, Եր., 1985, լ. 131-132, տես նաև՝ Ռաֆֆի, լ. 275:

<sup>24</sup> В. Н. Левиатов, Очерки из истории Азербайджана в XVIII веке, б., 1948, л. 40:

Ըստ այդմ՝ դրանք հիմնականում բնակեցված էին շիա և տունի իսլամ դավա-



Նկ. 2. Գորգ «Օսկանապատ»  
աստղազարդերով:

նող մահմեդական ցեղերով, մասնավորապես կարափափախներով /թարաքյամա/: Այստեղի մի քանի գյուղերի (Դաշքենդ, Զիլ) բնակիչներն էլ այդտեղ էին տեղափոխվել Ղազախի գավառակից, իսկ Բաբաջան Դարասիում էլ 1840-50-ական թվականներին հաստատվել էին այրումները: Նկարագրելով նրանց խղճուկ բնակարանները՝ «տները գետնափոր են, շատ ողորմելի, գաղթել են Ղազախի հնջա գյուղից, Երվանդ Լալյայանը, սակայն, այս երեքի առումով շեշտում է, որ «այստեղի կանայք շատ լավ գորգեր և կարպետներ են գործում»<sup>25</sup>: Մենք այս ոճապրում որևէ տարօրինակություն չենք տեսնում՝ Ղազախի գա-

վառակն ու նաև Լոռին ու Տավուշը գորգագործական մշակույթի հանրահայտ ու ավանդական կենտրոններ էին, գոյություն ուներ նաև գորգերի ապրանքային արտադրություն, ուստի բնական է, որ մահմեդական կանայք էլ որպես էժան աշխատուժ, ներգրավված էին այդ ասպարեզում: Ընդհանրապես հարավային Կովկասում և այդ թվում Սևանի ավազանում գորգագործական մշակույթի նոր վերելքը սկզբնավորվում է XIX դարի վերջին քառորդում: Մակար Բախուդարեանցը Արցախից ու մերձակայքից, ինչպես նաև Սոթքից արտահանվող ապրանքների թվում հիշատակում է նաև «պատուական գորգ, կարպետ, մափուաշ, խուրչին...»<sup>26</sup>: Նոր Բայազետի գավառում և նրա կազմում եղած Սոթքի տնտեսական նկարագրին վերաբերող վիճակագրական բնույթի հետազոտություններում, որպես գորգագործության կենտրոն, առանձնացված է Գյողալդարան (Ներկայում՝ Վարդենիկ): Ըստ եղած տեղեկությունների՝ այդտեղ գործում էին գործվածքի զանազան տեսակներ՝ այդ թվում գորգեր ու կարպետներ, որոնց համար անհրաժեշտ թելերը հիմ-

<sup>25</sup> Ե. Լալյայեան, Նոր Բայազետի գավառ, Բասարքնչար գիւղական հասարակություն, Ազգագրական հանդես, գիրք XIX, Թիֆլիս, 1910, լ. 19, 31, 33:

<sup>26</sup> Մակար Եպս. Բարխուտարեանց, լ. 157:

Նականում ներկված էին բնական ներկանյութերով: Հաղորդելով այդ ամենի մասին, Տեր-Մարկարովը նշել է նաև, որ տներում կային հատուկ պահոցներ՝ ծալքեր, որոնցում պահում էին գորգերն ու մյուս գործվածքները<sup>27</sup>:

Գորգագործական մշակույթը կար նաև Բասարքչարում (Ներկայում՝ Վարդենիս): Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանը այդ առոմնով հաղորդում է, որ այդտեղ կանայք «գործում են խալիչա և կարպետ, և իրենց որդուց և մարդկանց համար ամեն բրդե զգեստ, ինչպես Երնջակի գաւառացիք»<sup>28</sup>: Այս տեղեկություններն ըստ էության վերաբերում են տարածաշրջա-



Ակ. 3. Գորգ «Սոռը»

նում բնակություն հաստատած հայ վերաբնակիչներին, որոնք XIX դարի վերջերին Սևանի ավագանի հարավային ու հարավ արևելյան հատվածներում՝ մասնավորապես Սոյեքում, շարունակում էին իրենց բնակության նախկին վայրերին բնորոշ գորգագործական մշակույթի ավանդույթները: Նշված երկու դեպքերում էլ խոսքը վերաբերում է 1828-1830 թվականներին Արևմտյան Հայաստանից և հյուսիս-արևսույան հրանից արևելյան Հայաստան տեղափոխված հայերին: Ամեն դեպքում կարևոր է, որ վերաբնակիչ հայերը բնակության այդ նոր վայրերում էլ շարունակել են զարգացնել իրենց բնորոշ գրաղմունքները՝ այս դեպքում Երնջակ գավառի գորգագործական ավանդույթները: Ինչ վերաբերում է

Վերջին երկու դարում այդտեղ հաստատված եկիր մահմեդական ցեղերին, նրանց համար գորգերի ու կարպետների և ընդհանրապես ամեն ինչի ձեռք բերման հիմնական միջոցը եղել է կողոպուտն ու ավարառությունը: Հանուն արդարության պետք է նկատի ունենանք, որ գորգը, լինելով վերնախա-

<sup>27</sup> Ա. Տեր - Մարկարօն, Ըստ Ղեզալդարա.- ԾՄՕՄՌԿ, վառ. 17, Թիֆլիս, 1893, Լ. 107:

<sup>28</sup> Նույն տևողում, Լ. 604:

վային առարկա, գործածվել է այդ ցեղերի աշխարհիկ ու հոգևոր վերնախավի կենցաղում:

Այդ առումով ենթադրում ենք, որ տարբեր մակարդակների իշխողների նման, պատմական Հայաստանի հյուսիս-արևելքում հաստատված քոչ վոր ցեղերի ցեղապետերի հարեմներում կանայք ու աղջիկները գրավվել են նաև գորգագործությամբ: Թե ինչ տեսակի կամ տիպի գորգեր են գործվել, մեր ծեռքի տակ որոշակի տեղեկություններ չկան, ուղղակի կարելի է ենթադրել, որ դրանք կարող էին լինել իրենց քոչի երթուղու երկայնքով, հատկապես իրանի հյուսիսարևմտյան գորգագործական կենտրոններում տարածում ունեցածները: Այսքանին պետք է ավելացնենք նաև հայկական և այլ բնակավայրերից կողոպուտի կամ այլ ճանապարհներով ծեռք բերածները, որոնք կրկնօրինակվելով աստիճանաբար դիտարկվել են որպես տվյալ ցեղի մշակույթ: Հասկանայի է, որ իրականում դրանք հայոց և իրանական ժողովուրդների գորգարվեստի ավանդույթների միայն պարզ յուրացումներ են:



Նկ.4. Գորգ «Խնձորեսկ»

Խանիկորեն յուրացրել էին այդ տարածաշրջաններին բնորոշ հայոց ավանդական գորգարվեստին բնորոշ գորգերի տասնյակ տիպեր ու տարբերակներ, և դրանք հետագայում էլ տեղայնացրել Սոթքում և Տավուշում՝ Բորչալուի գավառում, մե-

խանիկորեն յուրացրել էին այդ տարածաշրջաններին բնորոշ հայոց ավանդական գորգարվեստին բնորոշ գորգերի տասնյակ տիպեր ու տարբերակներ, և դրանք հետագայում էլ տեղայնացրել Սոթքում:

Ամեն դեպքում պետք է նկատի ունենալ, որ այդ տեղեկությունները վերաբերում են 1880-ական թվականներին ու XX դարի սկզբներին, երբ արևմտաեվրոպական երկրներում ու Հյուսիսային Ամերիկայում կտրուկ աճել

Էր արևելյան ձեռագործ գորգի պահանջարկը: Այն բավարարելու համար գորգագործության ավանդական կենտրոններում, ինչպես նաև Հայաստանի ու Վորքասիական գորգագործական կենտրոններում արագորեն հիմնվեցին գորգագործական մանուֆակտորաներ, որոնցում ընդգրկված հազարավոր տնայնագործներ գործում էին տեխնիկական նկարների վրա գծված ավանդական կրնօրինակներ և վերամշակումներ: Հարավային Կովկասում դա իրականացնում էր Կովկասյան տնայնագործական կոմիտեն, որն էլ, ի շարու հարավային Կովկասի մի շարք տարածաշրջանների, այդ գործում ընդգրկել էր նաև խնդրո առարկա գավառը: Հարկ է շեշտել, որ այս դեպքում ընդհանուրապես լայնորեն օգտագործվում էին մահմեդական կանանց ու աղջիկների էժան աշխատությ այնպես, ինչպես որ դա կազմակերպվել էր Շուշիում<sup>29</sup>:

Անտարակոյս վերը հիշատակված վերաբնակիչների միջոցով ու նաև Տեղայնագործական կոմիտեի գործունեության արդյունքում Սոլթքում տեղայնացվեցին Տավուշում, ինչպես նաև հարավային Կովկասում ավանդական համարված գորգերի մի շարք տիպեր: Այսպես թե այնպես ակնհայտ է, որ XIX դարի վերջերին, ինչպես որ Արցախի, Սյունիքի, Տավուշի գորգագործական կենտրոններում էր, Սոլթքում նույնպես աղջիկների օժիտի կազմում պարտադիր տարր էր նաև գորգը, և դա էլ փաստում է այդտեղ գորգագործության գարգացած լինելը<sup>30</sup>:

Այս հակիրճ նկարագրից պարզ է դառնում, որ այս կամ այն չափով Հայոց Արևելից կողմում ու հարակից տարածաշրջաններում մինչ ուշ միջնադարը ներառյալ ծեավորված պատմամշակութային ավանդույթները շարունակվել են նաև



Նկ.5. Գորգ «Ջրաբերդ-Վիշապագորգ»

<sup>29</sup> Ա. Յելլենակչե, Թօրօդ Ռիուսա, Իրուզամուտական կուբրօս և ուլասօն, - ԾՄՕՄԻՒ, ԽՍՀ, XI, Ղիֆլիս, 1891, լ. 3, 6, 32:

<sup>30</sup> Ե. Լալայեան, Նոր Բայազետի գավառ կամ Գևղարքունիքի ազգագրություն, ընտանեկան բարք-Ազգագրական հանդես, գիրք XVI, Թիֆլիս, 1907, լ. 28:

հաջորդ դարերում ևս: Ասել է թե Եկվոր վաչկատուն ցեղերը թեև խնդրո առարկա տարածաշրջանում, ինչպես նաև Քարվաճառում և Գեղարքունիքում, XVIII դ. առաջին կեսից սկսած մինչ 1820-ական թվականները, կազմել են բնակչության գերակշռող մասը, այնուամենայնիվ, մշակութային առումով այդ տարածաշրջաններում որևէ ներդրում, որևէ նշանակալից հետք չեն թողել:

Այդ իրողությունը հաշվի առնելով էլ մենք գտնում ենք, որ Սոթքում թեև ուշ միջնադարում ու նոր դարի սկզբներին գորգագործական մշակույթը անկում էր ապրել, այնուհանդերձ մասնակիորեն գոյություն ունեցած գորգագործական կենտրոններին վերաբերող գորգերի որոշ նմուշներ ներկայացնում են նաև նախորդ դարերի ավանդույթները: Խնդրո առարկա տարածաշրջանում ձևավորված գորգագործական ավանդույթների ու դրանցում մահմեդական ցեղերի ունեցած դերի առումով առանձնահատուկ մեկնաբանումներ ունի Լ. Քերիմովը: Նա, նկատի ունենալով XIX դարի վերջերի ժողովրդագրական նկարագիրը, գտնում է, որ Սևանա լճի հյուսիսային ու հյուսիս-արևելյան տարածքներին բնորոշ գորգերը տարբերակվում էին «Կարա-Գոյունլու» անունով և դրա պատճառը տարածաշրջանը այդ ցեղով բնակեցված լինելն էր<sup>31</sup>: Ընդ որում նա համարում է, որ այդ ցեղը «զբաղվում էր երկրագործությամբ և անասնապահությամբ, երկար դարեր գորգագործությունը նրանց արհեստն էր ու դարձել էր ավանդական»<sup>32</sup>: Միաժամանակ, նրա կարծիքով, դրանց գործած գորգերն էլ կրում են միջինասիական գորգագործական մշակույթի ավանդույթները:

Իսկ ընդհանուր առմամբ այս հեղինակը պատմական Հայաստանի հյուսիս-արևելյան տարածաշրջաններում գոյություն ունեցած գորգարվեստը վերագրել է քոչվոր ու եկվոր թուրքմենական ցեղերին, մասնավորապես բորչալու ցեղամբին, որոնք նախկինում բնակվում էին Ուրմիա լճի հարավային տարածքներում՝ Սուլդուֆի գավառում, և Սեֆյան շահերի որոշումներով այդտեղ հայտնվել են XVII- XVIII դարերում: Լ. Քերիմովի ունեցած տեղեկությունների համաձայն՝ այդ ցեղը հայտնի էր նաև «կարափափախ» անվանումով: Նա գտնում է նաև, որ այդ ցեղերը տեղյակ էին գորգագործական մշակույթին, և իրենք էլ նպաստել

<sup>31</sup> լլ. Կերիմօվ, Ազերբայջանский ковер, 1. 3, Ե., 1983, լ. 149:

<sup>32</sup> Նույն տևողում:

Են վերը նշված տարածքներում գորգագործության արմատավորման համար: Ընդ որում նա այս ցեղերին ներկայացնում է որպես «ադրբեջանացիներ»<sup>33</sup>: Անկախ այդ հեղինակի արտահայտած մտքերից՝ մեզ համար կարևոր են տեղի մահմեդական բոլոր ցեղերի կենցաղավարմանը վերաբերող Շաֆֆու, Լեռի ու Լևիաթովի՝ վերը բերված նկարագրերը: Դրանք չեն կարող համեմատության եզրեր ունենալ հազարամյակների ընթացքում տեղաբնիկ հայերի ստեղծած մշակութային գործունեության հետ, որի առարկայական դրսնորումներից մեկն էլ գորգագործական մշակույթն է:

Ընդհանրապես խոսելով քոչվոր կամ կիսաքոչվոր ցեղերի կողմից գորգագործությամբ զբաղված լինելու մասին՝ ուսումնասիրողները պետք է կարևորեն մեկ իրողություն՝ դրանք, մասնավորապես արտերկրի տարբեր մասնագետների կողմից հիշատակվող ավշարները, շահսկաններն ու կարափափախները (թարաքյամա) վարում էին կիսաքոչվորական կենսաձև: Դրանք հաստատվել էին Մուղանի հարթավայրում, Ուրմիա լճի ավազանում և Վասպուրականի հարավ-արևելյան գավառներում, Փոքր Ասիայում, պատմական Հայաստանի մի շարք այլ տարածաշրջաններում, մասնավորապես Վանանդում ու նաև, ինչպես տեսանք, հյուախարևելյան Հայաստանում: Մեր այս հետազոտության առողմով առանցքային նշանակություն ունի այն հանգամանքը, որ այդ ցեղերի ամառային արոտատեղիները գտնվում էին Արցախի ու Սյունիքի ալպիական գոտիներում, և որ հատկապես ուշագրավ է, դատելով այդ ցեղերին վերաբերող գորգերի հրապարակված նմուշներից, հիմնականում գործել են Արցախին, Ուտիքին, Տավուշին ու մերձակա տարածաշրջանների գորգագործական կենտրոններին բնորոշ գորգեր<sup>34</sup>:

<sup>33</sup> Ա. Կերմօն, նշվ. աշխ., լք 145-146:

<sup>34</sup> Տես նաև՝ Վ. Թարիկյան, նշվ. աշխ.:



## ON THE MAIN PROCESSES OF FORMATION OF SOTK DEMOGRAPHIC DESCRIPTION AND RUG WEAVING TRADITIONS OF THE REGION

POGHOSYAN ASHKHUNJ

*PhD in Historical Sciences, Associate Professor,*

*GSU Lecturer*

e-mail: ashkhunjpoghosyan@gmail.com

In clarifying the origin of this or that Armenian cultural element, particularly the issues of their ethnicity, we give priority to the study and revealing the main processes of formation of the demographic description of the region, in this case the Sotk region of the Syunik province of historical Armenia. It is also very important to have a certain idea of the tribes inhabited there (Tarakyama, Karapapakh, Kurdish Kolani tribes, etc.) who led a semi-nomadic and nomadic lifestyle. As a result of all that, we have presented the Armenian cultural description of Sotk as much as possible, revealed and exposed the carpet types («Khncoresk», «Sotk», «Jrabert-vishapagorg») created there and in the carpet-weaving centers near Tavush and Artsakh.

**Key words:** *Sotk, demography, carpet-weaving, carpet, Mazra, Parisos, nomadic, Kolani.*

## ОБ ОСНОВНЫХ ПРОЦЕССАХ ФОРМИРОВАНИЯ ДЕМОГРАФИЧЕСКОГО ОБЛИКА СОТКА И ОБ ТРАДИЦИЯХ АРМЯНСКОГО КОВРОТКАЧЕСТВА РЕГИОНА

ПОГОСЯН АШХУНДЖ

*Кандидат исторических наук,*

*Преподаватель ГГУ*

электронная почта: ashkhunjpoghosyan@gmail.com

Для получения полного представления о культуре и истории армянского ковроткачества, особенно об этнической принадлежности того или иного культурного элемента, мы используем описание демографических процессов как по всей культурной территории Армении, так и в отдельных регионах, в данном случае в Сотке - провинции Сюник исторической Армении. Необходимо также иметь обстоятельное представление об экономических и культурных традициях, населяющих данный регион этнических групп, в частности - таракамов, карапа-

пов, коланов курдского происхождения и др. которые, в основном, вели кочевой или полукочевой образ жизни.

В итоге таких исследований появляется возможность иметь относительно обобщенное историко-культурное описание того или иного региона.

Именно при помощи такой методологии, нами выявлена общая картина культурно-экономической деятельности армян этого региона, а также выделены типы ковров («Хнцореск», «Сотк», «Джраберт-вишапагорг» и др.), которые были созданы в историческом Сотке и в ближайших ковроткацких центрах Тавуша и Арцаха.

**Ключевые слова:** Сотк, демография, ковроткачество, ковер, Мазра, Парисос, кочевник, колани.

Հողվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 13.08.2021թ.։

Հողվածը գրախոսվել է 06.11.2021թ.։